

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ՔԻՄԻԱ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն

1) Թվարկվածներից ո՞րն է քիմիական միացության անվանում.

- 1) օդ
- 2) օդի
- 3) ամոնիակ
- 4) գարեջուր

2) Որքա՞ն է էլեկտրոնների առավելագույն թիվը d ենթամակարդակում.

- 1) 2
- 2) 5
- 3) 6
- 4) 10

3) Որքա՞ն է պղնձի(II) նիտրատի ջերմային քայքայումից ստացված գազային խառնուրդում բարդ նյութի ծավալային բաժինը, եթե պինդ մնացորդը պղնձի(II) օքսիդն է.

- 1) 0,5
- 2) 0,2
- 3) 0,4
- 4) 0,8

4) Ո՞ր միացության մոլեկուլում են առկա σ - և π -կապեր.

- 1) CO_2
- 2) CH_4
- 3) H_2O
- 4) NH_3

5) Համապատասխանեցրե՛ք նյութի քիմիական բանաձևը նրա մոլեկուլում առկա կովալենտային կապերի թվի և մոլեկուլի էլեկտրոնային բանաձևում պատկերված ջրնդհանրացված էլեկտրոնների թվի հետ.

Քիմիական բանաձև	Կապերի թիվ	Չրնդհանրացված էլեկտրոնների թիվ
ա) CO_2	1) 4	Ա) 8
բ) H_2O	2) 3	Բ) 4
գ) N_2	3) 2	Գ) 3
	4) 1	Դ) 5

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3Ա, բ3Ա, գ2Դ
- 2) ա1Ա, բ3Բ, գ2Բ
- 3) ա1Ա, բ3Ա, գ2Դ
- 4) ա1Ա, բ3Բ, գ2Դ


6 0,02 մոլ $\text{Ba}(\text{OH})_2$ -ի և 0,04 մոլ H_3PO_4 -ի փոխազդեցությունից ի՞նչ զանգվածով (գ) աղ կգոյանա.

- 1) 12,0
- 2) 6,62
- 3) 4,66
- 4) 9,32

7 Ո՞ր կինետիկական հավասարումն է ճիշտ $\text{Cu}(\text{ս}) + \text{Cl}_2(\text{գ}) = \text{CuCl}_2(\text{ս})$ ռեակցիայի համար.

- 1) $v = k \times C(\text{Cu}) \times C(\text{Cl}_2)$
- 2) $v = k \times C(\text{Cu})$
- 3) $v = k \times C(\text{Cl}_2)$
- 4) $v = k / C(\text{Cl}_2)$


8 Տրված են հետևյալ ջերմաքիմիական հավասարումները.



Q_1 և Q_2 ջերմեֆեկտների ո՞ր փոխհարաբերությունն է ճիշտ.

- 1) $Q_1 < Q_2$
- 2) $Q_1 > Q_2$
- 3) $Q_1 = Q_2$
- 4) $Q_1 \ll Q_2$

9 Տրված է ամոնիակի քայքայման ռեակցիայի հավասարում:



Ո՞ր դեպքում հավասարակշռությունը կտեղաշարժվի դեպի ձախ.

- 1) NH_3 -ի ավելացնելիս
- 2) ջերմաստիճանն իջեցնելիս
- 3) ճնշումն իջեցնելիս
- 4) ջերմաստիճանը բարձրացնելիս

10 Ո՞րն է օքսիդիչ նյութը $\text{Zn} + 2\text{HCl} = \text{ZnCl}_2 + \text{H}_2$ օքսիդացման-վերականգնման ռեակցիայում.

- 1) HCl
- 2) Zn
- 3) ZnCl_2
- 4) H_2

11 Որքա՞ն է 1-ական լիտր ազոտի և արգոնի խառնուրդի խտությունն ըստ ջրածնի.

- 1) 34
- 2) 17
- 3) 24
- 4) 12

12 Քանի՞ անգամ կմեծանա հեղուկ հեքսանի ($\rho = 0,66 \text{ գ/սմ}^3$) ծավալը (ն. ս.) այն գազային վիճակի անցնելիս.

- 1) 389,6
- 2) 22,4
- 3) 171,9
- 4) 215,4

13 Որոշակի քանակությամբ երեք աղ լուծել են ջրում: Մտացված լուծույթում հայտնաբերվել են 0,4 մոլ SO_4^{2-} , 0,1 մոլ Cl^- , 0,4 մոլ K^+ և 0,5 մոլ Na^+ իոններ: Ո՞ր շարքում են համապատասխանաբար բերված այդ աղերի նյութաքանակները (մոլ) և բանաձևերը.

- 1) 0,1 NaCl, 0,2 K_2SO_4 , 0,1 KCl
- 2) 0,1 NaCl, 0,2 K_2SO_4 , 0,2 Na_2SO_4
- 3) 0,1 NaCl, 0,4 K_2SO_4 , 0,2 Na_2SO_4
- 4) 0,2 NaCl, 0,2 K_2SO_4 , 0,2 Na_2SO_4

14 Համապատասխանեցրե՛ք աղի բանաձևը, դրա ջրային լուծույթում միջավայրի ռեակցիան և լակմուսի գույնը.

Բանաձև	Միջավայրի ռեակցիա	Լակմուսի գույն
ա) NH_4Cl	1) չեզոք	Ա) մանուշակագույն
բ) KBr	2) հիմնային	Բ) կապույտ
գ) NaNO_2	3) թթվային	Գ) կարմիր

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) ա3Գ, բ1Ա, գ2Բ
- 2) ա3Գ, բ1Ա, գ1Ա
- 3) ա3Ա, բ2Բ, գ3Գ
- 4) ա2Գ, բ3Բ, գ2Բ

15

Հետևյալ իոններից ո՞րն ունի $4s^03d^7$ էլեկտրոնային բանաձևը.

- 1) Cr^{2+}
- 2) Co^{2+}
- 3) Fe^{2+}
- 4) Fe^{3+}

16

4 % K_2CO_3 պարունակող 3 կգ մոխիրին ի՞նչ զանգվածով (գ) կալիումի օքսիդ կհամապատասխանի.

- 1) 81,74
- 2) 94,74
- 3) 138,05
- 4) 120,00

17

Ո՞ր անիոնի շառավիղն է առավել մեծ.

- 1) I^-
- 2) Br^-
- 3) Cl^-
- 4) F^-

18

${}^6_3Li + {}^1_0n \rightarrow \alpha + \dots$ միջուկային ռեակցիայի հավասարման մեջ ո՞րն է բաց թողած մասնիկը.

- 1) ${}^0_{-1}\beta$
- 2) 2_1H
- 3) 3_1H
- 4) 1_1p

19

Հետևյալ աղերից որո՞ւմ է մետաղի զանգվածային բաժինն առավել մեծ.

- 1) $MgCl_2$
- 2) $CaCl_2$
- 3) $SrCl_2$
- 4) $BaCl_2$

20-21. Տրված է հավասար զանգվածներով ծծումբ և ածխածին պարունակող խառնուրդ:

20

F նշ ծավալով (լ, ն. պ.) գազային խառնուրդ կստացվի 48 գ զանգվածով նշված խառնուրդն լրիվ այրելիս.

- 1) 24,44
- 2) 56
- 3) 61,6
- 4) 89,6

21

Ի՞նչ զանգվածով (զ) գազային խառնուրդ կստացվի 24 գ զանգվածով նշված խառնուրդի և խիտ ձմբակյան թթվի փոխազդեցությունից.

- 1) 184
- 2) 244
- 3) 230
- 4) 154

22

Ո՞ր աղով է պայմանավորված ջրի ժամանակավոր կոշտությունը.

- 1) CaCl_2
- 2) MgSO_4
- 3) $\text{Ca}(\text{HCO}_3)_2$
- 4) NaCl

23

Երկաթի և ալյումինի փոշիների խառնուրդից երկաթն առանձնացնելու համար ո՞ր նյութի լուծույթը կարելի է օգտագործել.

- 1) HCl
- 2) H_2SO_4 (նոսր)
- 3) NaOH
- 4) HNO_3 (նոսր)

24

Ո՞ր շարքում է օրթոֆոսֆորական թթվի լուծույթին աստիճանաբար կալիումի հիդրօքսիդի ջրային լուծույթ ավելացնելիս ստացվող աղերի բանաձևերի ճիշտ հաջորդականությունը.

- 1) K_3PO_4 , KH_2PO_4 , K_2HPO_4
- 2) K_2HPO_4 , KH_2PO_4 , K_3PO_4
- 3) KH_2PO_4 , K_3PO_4 , K_2HPO_4
- 4) KH_2PO_4 , K_2HPO_4 , K_3PO_4

25

Ո՞ր նյութի հետ է փոխազդում ազոտական թթուն.

- 1) CaCO_3
- 2) Au
- 3) CuSO_4
- 4) CO_2

26

Ո՞րն է CaC_2 , SiC , Al_4C_3 բանաձևերն ունեցող նյութերի ընդհանուր անվանումը.

- 1) կարբոնատներ
- 2) հիդրոկարբոնատներ
- 3) կարբիդներ
- 4) կարբոնիլներ

27

Համապատասխանեցրե՛ք հրամետաղարտադրության եղանակով մետաղների ստացման ռեակցիաների ելանյութերը և այդ ռեակցիաների հավասարումների քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

<i>Ելանյութեր</i>	<i>Գործակիցների գումար</i>
1) $\text{WO}_3 + \text{H}_2$	ա) 6
2) $\text{TiCl}_4 + \text{Mg}$	բ) 8
3) $\text{Cr}_2\text{O}_3 + \text{Al}$	գ) 4
4) $\text{FeO} + \text{CO}$	դ) 5

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) 1ա, 2բ, 3գ, 4գ
- 2) 1բ, 2ա, 3ա, 4գ
- 3) 1բ, 2գ, 3ա, 4դ
- 4) 1ա, 2բ, 3գ, 4ա

28

Ո՞րն է սիլիցիումի և նատրիումի հիդրօքսիդի ջրային լուծույթի փոխազդեցության ռեակցիայի կրճատ իոնային հավասարումը.

- 1) $\text{Si} + 4\text{H}^+ = \text{Si}^{4+} + 2\text{H}_2$
- 2) $\text{Si} + 2\text{OH}^- = \text{SiO}_2 + \text{H}_2$
- 3) $\text{Si} + 6\text{OH}^- = \text{SiO}_3^{2-} + 3\text{H}_2\text{O}$
- 4) $\text{Si} + 2\text{OH}^- + \text{H}_2\text{O} = \text{SiO}_3^{2-} + 2\text{H}_2$

29

Ո՞ր գույգ ներառված միացություններն են միջդասային իզոմերներ.

- 1) ալկադիեն և ալկեն
- 2) ալկան և ցիկլոալկան
- 3) կարբոնաթթու և էսթեր
- 4) միատոմ սպիրտ և էսթեր

30

Առաջնային ածխածնի քանի՞ ատոմ է առկա 2,2,4,4 –քառամեթիլպենտանի մոլեկուլում.

- 1) 3
- 2) 4
- 3) 5
- 4) 6

31

Ինչի՞ օ է հավասար sp^3 հիբրիդային վիճակում գտնվող ածխածնի ատոմների թիվը բութեն-2-ի մոլեկուլում

- 1) 4
- 2) 3
- 3) 2
- 4) 1

32

Ո՞րն է ածխածնի n -թվով ատոմ պարունակող դիենային ածխաջրածնում ածխածին տարրի զանգվածային բաժնի որոշման բանաձևը.

- 1) $6n/(7n+1)$
- 2) $7n/(7n+1)$
- 3) $7n/(7n-1)$
- 4) $6n/(7n-1)$

33

Ո՞րն է միաօքսիգեն կարբոնատի ֆունկցիոնալ խումբը.



34

Որո՞նք են ավելցուկով վերցված արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթով մրջնադեղին լրիվ օքսիդացման ռեակցիայի վերջանյութերը.

- 1) $Ag_2O, HCOOH$
- 2) Ag, H_2O, CO_2
- 3) $Ag, HCOOH$
- 4) Ag, CH_3OH

35

Միննույն ճարպաթթվի մնացորդ պարունակող ճարպի լրիվ հիդրումից առաջացած նոր ճարպի Mr -ի արժեքը 6 միավորով մեծ է ելային ճարպի Mr -ի արժեքից: Ո՞ր ճարպաթթվի մնացորդն է եղել ելային ճարպում.

- 1) ստեարինաթթվի
- 2) պալմիտինաթթվի
- 3) լինոլաթթվի
- 4) օլեինաթթվի

36

Ո՞րն է մեթիլամինի այրման ռեակցիայի հավասարման քանակաչափական գործակիցների գումարային թիվը.

- 1) 12
- 2) 20
- 3) 26
- 4) 29

37-38. 2-բրոմբութադիեն-1,3-ի պոլիմերման աստիճանը 120 է:





37

Որքա՞ն է պոլիմերի միջին մոլային զանգվածը (q/m ուլ).

- 1) 15940
- 2) 15960
- 3) 15920
- 4) 15900

38

Ո՞րը չի կարող լինել այդ պոլիմերի տարրական օղակ.



39

Ո՞ր ալկանն է ենթարկվել համաչափ կրեկինգի, եթե արդյունքում առաջացել են պենտան և պենտեն.

- 1) օկտան
- 2) դեկան
- 3) նոնան
- 4) հեպտան

40

Ո՞ր նյութն է ստացվում բնական կաուչուկը չափավոր քանակությամբ ծծմբի հետ տաքացնելիս.

- 1) ռետին
- 2) պոլիէթիլեն
- 3) կապրոն
- 4) էբոնիտ

41


27 °C ջերմաստիճանի և 133 253,9 Պա ճնշման պայմաններում 400 մլ ծավալով գազի զանգվածը 0,685 գ է ($R = 8,3 \text{ Ջ/մոլ}\times\text{Կ}$, $T_0 = 273 \text{ Կ}$): Որքա՞ն է գազի մոլային զանգվածը (գ/մոլ):

42

Նատրիումի կարբոնատի 0,02 մոլ/լ կոնցենտրացիայով ջրային լուծույթում հայտնաբերվել են 1×10^{-3} մոլ/լ հիդրօքսիդ իոններ: Որքա՞ն է աղի հիդրոլիզի աստիճանը (%), եթե հիդրոլիզն ընթացել է միայն մեկ փուլով:

43

Որքա՞ն է ազոտ տարր պարունակող X_1 , X_2 և X_3 նյութերի մոլային զանգվածների (գ/մոլ) գումարը փոխարկումների հետևյալ շղթայում.



44

Ի՞նչ քանակով ջերմություն (կՋ) կկլանվի 2 գ դեյտերիումի $D_2 \rightarrow 2D \rightarrow 2D^+$ փոխարկումն իրականացնելիս, եթե դեյտերիումի մոլեկուլում կապի էներգիան 440 կՋ/մոլ է, իսկ իոնացման էներգիան՝ 1330 կՋ/մոլ:

45

Որքա՞ն է կալիումի նիտրատի ջերմային քայքայման ռեակցիայի արդյունքում օքսիդացման հետևանքով առաջացած նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը:

46-47. Միացություններում հաստատուն (+3) օքսիդացման աստիճան ցուցաբերող 13,5 գ զանգվածով մետաղի խարտուքը օդում տաքացնելիս առաջացրել է միացություն, որի զանգվածը 12 գրամով մեծ է փոխազդած մետաղի զանգվածից

46

Որքա՞ն է առաջացած միացության հարաբերական մոլեկուլային զանգվածը:

47

Ի՞նչ զանգվածով (գ) քլորիդ կառաջանա 2 մոլ քանակով այդ մետաղի և քլորի փոխազդեցությունից:

48-49. Նատրիումի սուլֆատի նմուշը լուծել են ջրում և ստացել 113,6 մլ ($\rho = 1,25$ գ/մլ) լուծույթ: Այնուհետև ջուրը շոգիացրել են և ստացել տասջրյա բյուրեղահիդրատի բյուրեղներ, որոնց զանգվածը 45 գրամով մեծ է եղել ելային նմուշի զանգվածից:

48

Որքա՞ն է անջուր նատրիումի սուլֆատի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

49

Նատրիումի սուլֆատի 10 % զանգվածային բաժնով լուծույթ պատրաստելու նպատակով ի՞նչ ծավալով (մլ) ջուր պետք է ավելացնել ելային լուծույթին:

50-51. FeCl₃ կատալիզատորի առկայությամբ բենզոլի երկտեղակալված հոմոլոգը քլորացնելիս ստացվել է միայն մեկ մոնոքլորածանցյալ, որում քլորի զանգվածային բաժինը 21,068 % է:

50

Որքա՞ն է ածխածնի ատոմների թիվը ածխաջրածնի մեկ մոլեկուլում:

51

Որքա՞ն է բենզոլի տրված հոմոլոգի անվանման մեջ բենզոլային օղակում տեղակալիչների դիրքերը ցույց տվող թվերի գումարը:

52-53. Միացություններում +1 օքսիդացման աստիճան ցուցաբերող 4,2 գ զանգվածով մետաղի և ֆոսֆորի փոխազդեցությունից գոյացել է 10,4 գ ֆոսֆիդ:

52 Որքա՞ն է մետաղի(1) ֆոսֆիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

53 Որքա՞ն է նույն զանգվածով մետաղի նմուշը ջրում «լուծելու» արդյունքում ստացված գազի ծավալը (մլ, ն.պ.):

54-55. Որոշակի գանգվածով Բերթոլեի աղի կատալիտիկ քայքայումից ստացված թթվածնի մեջ այրել են 24 գ ածխածին և ստացել օքսիդների խառնուրդ: Ստացված օքսիդների խառնուրդը ավելցուկով վերցված կրաջրի միջով անցկացնելիս անջատվել է 40 գ նստվածք:

54

Որքա՞ն է քայքայված Բերթոլեի աղի գանգվածը (գ):

55

Որքա՞ն է ածխածնի այրումից ստացված գազային խառնուրդում ածխածնի(II) օքսիդի ծավալային բաժինը (%):

56-58. Մեթանի այրման ռեակցիայի հավասարումն է. $\text{CH}_4(\text{g}) + 2\text{O}_2(\text{g}) = \text{CO}_2(\text{g}) + 2\text{H}_2\text{O}(\text{h})$
իսկ ռեակցիային մասնակցող նյութերի գոյացման ջերմություններն են.
 $\Delta H_{\text{գոյ}}(\text{CO}_2) = -394$ կՋ/մոլ, $\Delta H_{\text{գոյ}}(\text{H}_2\text{O}) = -286$ կՋ/մոլ, $\Delta H_{\text{գոյ}}(\text{CH}_4) = -75$ կՋ/մոլ:

56 Որքա՞ն է մեթանի այրման ռեակցիայի ջերմությունը (կՋ/մոլ):

57 Ի՞նչ քանակով ջերմություն (կՋ) կանջատվի 48 գ մեթանն այրելիս:

58

Ի՞նչ զանգվածային բաժնով (%) աղ կառաջանա 32 գ մեթանի այրման արգասիքները 112 գ կալիումի հիդրօքսիդ պարունակող 1840 գ լուծույթի մեջ անցկացնելիս:

59-61 Ազոտի և ամոնիակի 60 լ (ն. պ.) ծավալով խառնուրդին 10 լ (ն. պ.) քլորաջրածին ավելացնելիս ստացվել է ըստ հեղիումի 6,23 հարաբերական խտությամբ գազերի նոր խառնուրդ:

59

Ի՞նչ ծավալով (լ, ն. պ.) գազ կստացվի ելային խառնուրդում պարունակող ամոնիակի լրիվ այրումից:

60

Որքա՞ն է ազոտի ծավալային բաժինը (%) գազերի ստացված խառնուրդում

61

Ի՞նչ զանգվածով (գ) մետաղ կստացվի գազերի ստացված խառնուրդով բավարար քանակությամբ Cu(II) օքսիդը վերականգնելիս:

62-64. 15,4% զանգվածային բաժնով ծծմբական թթվի 250 գ լուծույթում որոշակի քանակով ծծմբի(VI) օքսիդ լուծելիս ստացվել է 46% զանգվածային բաժնով թթվի լուծույթ:

62 *Որքան է լուծված ծծմբի(VI) օքսիդի զանգվածը (գ):*

63 *Քանի գրամ 46% զանգվածային բաժնով ծծմբական թթվի լուծույթ կպահանջվի 36,8 գ երկաթի(III) օքսիդը լուծելու համար:*

64

Քանի գրամ ծծմբի(VI) օքսիդ պետք է լուծել 46% զանգվածային բաժնով ծծմբական թթվի 100 գ լուծույթում 20% զանգվածային բաժնով օլեում ստանալու համար:

65-67. 36,5 գ երկպեպտիդը եռացրել են 10 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի, ռեակցիայի համար անհրաժեշտ քանակով լուծույթի հետ: Ստացված լուծույթը գոլորշացրել են և ստացել 52 գ չոր մնացորդ:

65

Որքա՞ն է երկպեպտիդի մոլային զանգվածը (գ/մոլ):

66

Որքա՞ն է ծախսված նատրիումի հիդրօքսիդի լուծույթի զանգվածը (q):

67

Որքա՞ն է մեծ մոլային զանգվածով ամինաթթվի մոլեկուլում σ -կապերի թիվը:

68

Համապատասխանեցրե՛ք համաձուլվածքների անվանումը և բաղադրությունը.

Անվանում	Բաղադրություն
ա) բրոնզ	1) երկաթ, 0,6–1,5 % ածխածին
բ) բարձրածխածնային պողպատ	2) պղինձ, անագ
գ) մելքիր	3) երկաթ, մինչև 4 % ածխածին
դ) թուջ	4) երկաթ, 0,2 % ածխածին
	5) երկաթ, սնդիկ
	6) պղինձ, նիկել, կոբալտ

69

Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը ատոմամոլեկուլային ուսմունքի դրույթների վերաբերյալ.

- 1) Չեզոք ատոմները գտնվում են բոլոր նյութերի բյուրեղավանդակների հանգույցներում:
- 2) Ատոմները քիմիապես անբաժանելի մասնիկներ են:
- 3) Ատոմները կազմված են մոլեկուլներից:
- 4) Չեզոք ատոմը էլեկտրոն միացնելիս վերածվում է անիոնի:
- 5) Բոլոր ատոմները հիմնականում ունեն ավելի մեծ զանգված, քան դրանց առաջացրած մոլեկուլները:
- 6) Քիմիական ռեակցիաների ընթացքում նոր նյութերն առաջանում են էլանյութերի բաղադրության մեջ առկա ատոմներից:

Էթանի և ացետիլենի խառնուրդը ավելցուկով բրոմաջուր պարունակող սրվակի միջով անցկացնելիս սրվակի պարունակության զանգվածն ավելացել է 2,6 գրամով: Այդ նույն քանակությամբ ածխաջրածինների խառնուրդն լրիվ այրելիս գոյացել է 55 գ ածխածնի(IV) օքսիդ:

Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ.

- 1) Ածխաջրածինների խառնուրդում ալկանի ծավալային բաժինը 80 % է:
- 2) Ածխաջրածինների խառնուրդի ծավալը 14 լ է (ն. պ.):
- 3) Սկզբնական խառնուրդն այրելիս ծախսվել է 46,76 լ (ն. պ.) օդ:
- 4) Սկզբնական խառնուրդում պարունակվող ացետիլենն ավելցուկով վերցված արծաթի օքսիդի ամոնիակային լուծույթի մեջ անցկացնելիս ստացվել է 24 գ նստվածք:
- 5) Ածխաջրածինների խառնուրդի միջին մոլային զանգվածը 29 գ/մոլ է:
- 6) Ելային գազային խառնուրդում ածխածնի ատոմների թիվը $3,7625 \times 10^{23}$ է: